**Ձև N 5.5.1**

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 67

*հերթական համարը*

*Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. *Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝*

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը (Խաչփար բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

| *Մարզ, համայնքը, բնակավայրը Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը* | *Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը* | Փոփոխությունից հետո հարկայնությունը/հապավումն ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը) |
|---|---|---|
| ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի (Խաչփար բնակավայր)<br><br>03-050-0113-0040 կադաստրային ծածկագրով 0.16 հա մակերեսով հողամասից 0.03721 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր | 03-050-0113-0040 կադաստրային ծածկագրով 0.16 հա մակերեսով հողամասից 0.03721 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր | Համաձայն Արարատ-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի |

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | **Ե. Վարդանյան** |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | **Լ. Առաքելյան** |

Երևան, «20» «փետրվարի» 2026թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրություններով ներկայացված պայմանները (կցվում են):

4. Մասիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Խաչփար բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի (Խաչփար բնակավայրը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները: